



ՀԱՅ

# ՍԿԱՈՒՄ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ Հ. Մ. Ը. Մ.



**ՀԱՅ ՍԿԱՈՒՄ**  
 ՀԱՅԷ. — Խորասանյան խան, թիւ 26, Սիրքեճի, Գ. Պոլիս  
 (Teleph. № 2146 St.) H A I S C O U T (Հեռ.մ. 2146 ՍՊ.)  
 ORGAN DES SCOUTS ARMENIEN  
 ADRESSE. — Khorassandjian Han, 26, Sirkedji — CONS/PLE  
 Բաժնեգին Տարեկան 120 դր.  
 Արտասանման 15 ֆր.  
 Ամերիկա 1.50 տոլար

Բ. ՏՕՐԻ ԹԻԻ 3 ԸՆՏՐ 5 ԴԷՆ. 1 ՅՈՒԻԻՍ 1921

Մարդկութեան պատիւը պիտի ըլլայ այն ազգը, որուն անհասները շատ  
 սկստուներէ կազմուած պիտի ըլլան:  
 Աշխարհի ճանչցած բարոյական ուժերուն ամենէն մեծը պիտի ըլլայ այն:  
**ԼՈՒՏ ԱՌԶՊԷՐԸ**



17 Ապրիլ Սկիւտարի Մարզ սրանի մէջ սկստուական ընդհանուր բնութիւններու պահուն

**ԳՐԶԻՆ ԽՕՄԲԸ**


**«Սկաուտը եղբայր է ամէն ուրիշ սկաուտի...»**

Այո սիրելի բարեկամներս, սկաուտական թղթակցութիւններու օգուտը ձեր ենթադրածէն շատ աւելի է: Դուք այդ թղթակցութիւններով անշահախնդիր կապով մը կապուած կ'ըլլաք օտար պատանիներուն հետ որոնք՝ օր մը, իրենց հայրենիքներուն արհեստաւորները վաճառականները, գործարանատէրերը, նախարարները, երեսփոխանները, գիտունները կրնան ըլլալ: Ապագային, երբ դուք ալ ձեր անկախ հայաստանի իբր ազատ քաղաքացի դիրք մը ունենաք, միշտ կարիք պիտի զգար օտար երկիրներու հետ յարաբերութիւն մշակելու առեւտրական, գիտական կամ քաղաքական հոգի վրայ, այն ատեն է որ դուք պիտի քաղէք ձեր սկաուտական թղթակցութիւններու պտուղը ի նպաստ ձեզի եւ ձեր հայրենիքին, որովհետեւ մանկութեան բարեկամները չեն մոռցուիր, անոնց յիշատակը միշտ գեղեցիկ զգացումներ կ'արթնցնեն մեր մէջ քան թէ վերջէն շահու նկատումներով ձեռք բերուած ծանօթներունը: Օտար երկիրներու մէջ, միշտ ձեր տրամադրութեանը տակ պիտի ունենաք, վստահելի եւ պատանեկան յիշատակներով կապուած բարեկամներ: Երբ դուք օր մը այցելէք ուրիշ երկիրներ, հոն պիտի գտնէք ձեզ հիւրասիրող անկեղծ հոգիներ, որոնք ձեզի չը պիտի զգացնեն օտարութեան անպատեհութիւնները, դուք հոն, օտար երկրի մէջ, բոլորովին անծանօթ ընտանեկան բոյնի մը մէջ պիտի գտնէք, ձեր անցած ծաղիկ հասակի յիշատակներէն նշխարներ, որոնք դուք ժամանակին զրկած էք ձեր սկաուտ եղբոր, այդ փոքրիկ յիշատակներն իսկ բաւական պիտի ըլլան ձեր օտար, օրինակի համար, ձաքոնցի բարեկամին ընտանիքին մէջ մտերիմ շրջանակ մը գտնելու: Փոխադարձաբար ձեր օտարազգ բարեկամները պիտի այցելեն Հայաստան եւ հոն փոխանակ վարձկան առաջնորդներու, պիտի գտնեն նախկին իրենց սկաուտ եղբայրներէն բարեկամներ եւ անոնց աջակցութիւնը եւ հիւրասիրութիւնը պիտի վայելեն, անոր առջեւ քաց պիտի ըլլան ձեր հայրենիքին բոլոր պաշտօնական շէնքերը, դուք, իրենց քաց սիրտով պիտի քացատրէք ձեր երկրին առաւելութիւնները եւ թերութիւնները եւ անոնք սիրով

պիտի ուզեն աջակցիլ ձեզի՝ ուղղելու համար այդ թերութիւնները:

Հոս մէկիկ մէկիկ կարելի է թուել այն բոլոր առաւելութիւնները եւ անանկալները որոնք ձեռք պիտի բերէք ձեր այս թղթակցական ձեռնարկէն, միայն աս որոշ է որ ասով դուք լաւագոյն առիթը պիտի ստեղծէք ձեզի օտար բարեկամներ շահելու, կեանքի մէջ ձեզի աջակցներ նարելու, ձեր ազգը օտարներու լաւ ձեռով մը ծանօթացնելու:

Սկսէք այսօր եւ արդիւնքին վրայ մի մտածէք:



Սկաուտութեան հիմնադիր Զօր Պէտլըն Բաուլի նամակը Հայ սկաուտներու մասին

ՎԵՐԻ ՆԱՄԱԿԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

ՊՅՑ ՍԳԱՈՒՏ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ  
25 ՊԸԳԻՆԿԷՄ ԲԷԼԷՍ ԲՕՏ  
ԼճՈՒՍԵՆ, 8 Յունիս, 1921

Սիրելի Պ. Խօրսանճեան,  
Դարիթէն Թէսիկըր-ձեր սկաուտներուն տուած մէկ այցելութեան մասին ինձի տեղեկագիրը մը, զրկած է եւ այնչափ նպաստաւոր կերպով կը գրէ որ՝ պարտաւորուած

կը զգամ շնորհակալութիւններս յայտնել ձեր տղոց կըրթութեան մէջ սկառուական զաղափարներուն այսրան յաջող կիրարկման համար, Մասնաւորաբար ինձի հաճոյք պատճառեց լսելը թէ ձեր սկառուները լաւ զգացումներ կը տալեն իրենց անզլիացի եղբայրներուն եւ իմ անձին հանդէպ եւ կը յուսամ որ յանձն պիտի առէք բանոց տեղեկացնելու թէ որքան կը հետաքրքրուիմ անոց յառաջդիմութիւններովը եւ թէ որքան ուրախ եմ լսելով որ բաղդատաբար կարճ ժամանակուան մը մէջ այնլ ան լաւ գործ մը կատարած են:

Վերջերս Պաղեստինէն, Եգիպտոսէն եւ Հնդկանտանէն վերադարձայ եւ շատ կ'փափայէի որ ժամանակ ունենայի եւ Պօլիսն ալ այցելի, Պաղեստինի մէջ իբր «լրատար» հայ սկառու մը ունենալու քաղաքաբնութիւնը ունեցայ եւ եթէ ան ձեր տղոց տի փարը կը ներկայացընէր, այն ատեն ձեր տղայը շատ բարձր կարգի սկառուաները ըլլալու են - եւ նոյն ատեն զուարթներես - որովհետեւ այս տղան միշտ եռանդով կ'աշխատէր ու միշտ կը ժպտէր ու աւելին ընելու պատրաստ էր, հակառակ որ պատերազմի միջոցին իր պարագաներուն կորուստը զինքը բաւական տառապեցուցած էր եւ ինքն ալ իր հարեւաններու խուճիքի մը կոյմէ հրացանագարի ըլլալու սարսափէն հազիւ ազատած էր, բարեբաղդաբար վիրաւորուելէ վերջ մեռած կարծուած էր:

Հաճեցէք ձեր սրտուտներուն հաղորդել կաթոգին իղծերս:

Մնամ Ձերդ  
ՊԷՏԸՆ ԲԱՌԻԸԼ

**ՄԵՐ ՊԱՏԵՍՈՒՄՆԸ ՎԵՐԻ ՆԱՄՍԿԻՆ**

30 Յունիս 1921

Յարգելի Սկառու պետ

S. R. BADEN-POWELL

Մեր ընկերներէն Պ. Խօրասանճեանի անձնական նամակէն, Հայ Սկառուական Միութիւնս մեծ հաճոյքով տեղեկացաւ Ձեր հավակարի տողերը՝ հայ սկառուներու մասին: Միութիւնս ջանք չընենայեր ձեր սկզբունքները աւելի յայն չափով տարածելու հայ պատանիներու մէջ եւ կը յուսայ որ պիտի յաջողի իր նպատակին մէջ:

Միութիւնս շատ կը փափագի յարաբերութեան մէջ գտնուիլ Ձեզ, Ձեր սկառուներու եւ միւս ազգերու սկառուական կեդրոններուն հետ, կը յուսանք բարի պիտի ըլլաք երբեմն մեզ պատուելի ձեր նամակով:

Անցած տարուան Jamboreeի համար album մը եւ մեր «Հայ Սկառու» թերթէն զրկած էինք Ձեզ: որ դժբաղդաբար չէք ստացած՝ բոլոր անկանոնութեան պատճառով, Այս անգամ կրկին մաս մը կը զրկենք Ձեզ նոյն թերթերէն եւ նկարներէ:

Ընդունեցէք մեր սկառուական բարեկեցիք:

Հայ Սկառուական Միութեան  
Պատասխանատու-բարտուղար

(Ստորագրութիւն)

Կարօ



**ՃԷՄՊՕՐԻԻՆ ԱՌԹԻԻ  
ԱՒԱԳ ՊԵՏԸ ԿԸ ՊԱՏԵՍԷ՛ ՊՕՅ-ՍԿԱՌՈՒՏՆԵՐՈՒ  
ՊԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ**

(Շար. Թիւ 2ԷԳ)

Սկառուութեան նպատակն է թէ մէկը թէ միւրը զարգացնել եւ օգնել երիտասարդներուն՝ ըլլալու կարող եւ երջանիկ քաղաքացիներ:

Սկառուական ձեռնարկին էական յատկանիշը անոր ողիին մէջ է, և Անտառային արկածախնդրական զրոյցներով և Բնութեան սիրովն է որ կարելի է այդ ոգին զրոյշմել:

Ո՞ր տղան կրնայ անզգայ մնալ, նոյն իսկ նիւթապաշտ մեր դարուն մէջ, կոյս բնութեան կամ ազատ ուղիին հրաւէրին: Կրնայ ըլլալ որ մեր նախնական բնազդն է որ երեւան կ'ելլէ այս առթիւ: Ի՞նչ որ ալ ըլլայ, այս բնազդը կայ ու կը մնայ, և մոգական բանալիի մը պէս լայն կը բանայ այն դուռը ուրկէ կը թափանցեն մաքուր օդը եւ արեւը, առանց որոնց այնքան կեանքեր տրտում և միօրինակ պիտի մնային:


Բայց սկառուական դրութիւնը ասկէ անդին ալ կ'երթայ:

Վայրի գաւառներու զիւցազները, հետախոյզները և աշխարհադէտները, ծովերը ասպատակողները ինչպէս նաև օդի աշխարհակալները երիտասարդներուն համար փայլուն հմայիչներ են որոնց ամէն տեղ հետեւելու պատրաստ են: Ու կայտառ զուարթ պիտի երթան անոնց կտուրէն բաւական է որ առնականութեան և յանդգնութեան, արկածախնդրութեան և ճիգի կարողութեան և ճարպիկութեան, ուրիշներու համար ուրախ անձնազոհութեան երգը երգեն իրենց: Այս ամէնը տղու մը հոգիին ալ մարմինին ալ անուշը կը ջամբէ:

Տեսէք սա լաճը որ փոզոցն իվար կ'իջնէ իր աչքերը հեռուն կը դիտեն. մարգագետինը, ծովը կը տեսնէ հոն: Ամէն պարագայի մէջ ուշադրութիւնը ուրիշ տեղ է ապահովաբար կրնամ ըսել ձեզ ասիկա:

Սկառուութեան շնորհիւ, տղան, սկառուի տարազին տակ, Անտառաբնակ Մարդոց մեծ եղբայրակցութեան անդամի մը կը փոխուի: Կը սորվի հեռքի մը հետեւիլ և նշանները ճանշնալ, նշաններով խօսիլ, կրակ վառել, ապաստանարանը շինել և կերակուր եփել: Իր տասը մատներովը գիտէ շինել այն ամէն բան զոր կը պահանջի ռահվիրայի և քանակողոջի արհեստը:

### ԱՐՁԱԳԱՆԳ ՃԵՄՊՈՐԻԻ



(Շարունակութիւն թիւ 26և եւ վերջ)

Իր միութիւնն է վեց ընկերներու խմբակ մը՝ որուն կը հրամայէ իրենց պետը, իր ընկերներէն մէկը: Ահա՛, իրեն համար կազմուած, բնական խումբը, որ կրնայ ըլլալ բարերար կամ մլասակար: Ահա՛, անհատին համար, անձնագրսպումի և պատասխանատուութեան առիթը: Ահա՛ արուեստակցական ոգին կազմուած՝ խմբակին պատուոյն համար, այնքան ուժեղ՝ որքան ո և է դպրոցի մը տեղական ոգին:

Օտար ազգերու համար, սկաուտներուն գաւազանները աւելի կոթեր են, բայց սկաուտին համար, բոլորովին տարբեր բան մը կը ներկայացունեն անոնք: Իր գաւազանը, իր սեփական totemովը (անասունի պատկերովը) և իր մասնաւոր նշաններովը զարդարուած, առանձնայատուկ դրոշմ մըն է. իր գաւազանին նման, սկաուտը բազմութեան մէջ, անհատականութիւն մըն է որ ունի իր առանձնայատուկ գիծերը, իր առանձնայատուկ կարողութիւնները: Հօտին մաս կը կազմէ բայց իր յատուկ էակութիւնը (entity) ունի: Կեանքին ուրախութիւնները ճանչնալ կը սորվի՝ բացօթեայ կեանքին միջոցաւ:

Կայ նաև իմացական կողմը:

Տակաւ տոգորուելով բնութեան գիտութեամբը, տխեղծ հոգին կը մեծնայ և իր շուրջ կը դիտէ: Բացօթեայ կեանքը գերազանց դպրոցն է, այն դպրոցը որ թոյլ կուտայ դիտել և հասկնալ հրաշալի տիեզերքին հրաշալիքը:

Աշխարհին բոլոր տարրերը (նիւթական, հողեկան, առեւտրական, քաղաքական, տնտեսական, մարդասիրական), պատերազմին եռուզեռ հայոցին մէջ նետուած են: Ինչ դուրս պիտի գայ հոնկէ՝ երբ եռուզեռը դադրի: Ո՞վ կարող է ըսել:

Եթէ առաջ գալիք խառնուրդը անարժէք նիւթ մը ըլլայ, այն ատեն իրա՛ւ պատերազմը ողբերգութիւն մը եղած պիտի ըլլայ: Մեր գաւակները, մեր ցեղին լաւագոյն արիւնը և մեր հարստութիւնները ընդունայն վատնուած պիտի ըլլան:

Եթէ, ընդհակառակը, մեծ ազգերուն ձուլումը, շատ տարածուած և շատ վսեմ իտէալ, կարենայ կատարուիլ պատշաճ եղանակաւ, ան պիտի կրնայ արտադրել զուտ մետաղ մը՝ որուն շնորհիւ կարելի պիտի ըլլայ աշխարհի աշխատութիւնը կազմակերպել մինչեւ հիմա գործադրուած ծրագրէն աւելի ազնիւ ծրագրով մը:

(Շարունակելի)

ՊԷՅՏԸՆ ԲՍՈՒՐԷԼ  
Բարգմ. Յ. Թ. Է.

Մովային սկաուտները ազատագրութեան և այլ փորձեր կատարեցին, օգտագործելով այն նաւը որ pistեին ձախ կողմը կը գտնուէր:

Roversները կատակախաղ մը ներկայացուցին, ցոյց տալով սկաուտիզմի անցեալը և ծրնունդը:

Displys մը կը ներկայացնէր տեսարանի վերայ գտնուող խրճիթի հրդեհը, ցոյց տալով հրդեհի դէմ օգնութեան, մաքառումի և ազատագրութեան փորձերը:

Նուագախումբերու մրցումները շատ յաջող անցան, ինչպէս նաև երգերունը: Ամերիկեան նուագախումբը ամենաշատ ծափահարուեցաւ, նոյնպէս Սկովտիական cornemuseները (տիկկնուագ) և լոնտօնական 600 սկաուտներու ինքնատիպ orfեսրը:

Յարակից մասեր. — Օլիմպիայի յարակից մասերուն մէջ կը գտնուէին զանազան ցուցահանդէսներ: Սկաուտներու աշխատութեանց expositionներ երկաթեղէն, փայտեղէն, ոսկեղէն եւ այլն:

Յարկաքաժիկներն. Կօչկակարներու, դերձակներու, խոհարարներու, կահագործներու եւ այլն, միշտ գործունէութեան մէջ էին:

Իւրաքանչիւր երկրի համար յարկաքաժիկ մը յատկացուած էր. զոր կը կազմակերպէին և զարդարէին ամէն երկրի սկաուտները իրենց սովորութեան համաձայն:

Հողակոյտի մը վրայ «Traking Grond» մը հաստատուած էր, որուն վրայ ամէն օր հետք մը կը գծուէր. զոր սկաուտները կը լուծէին:

Յարկաքաժիկ մը յատկացուած էր խումբի մէտայիներու համար:

Ուրիշ մը կը պարունակէր Daily-Scoutը, ձեւնյօրի օրաթերթը, որ բոլոր սկաուտներու կողմէ կը տպուէր:

Յետոյ կուգար «Zoo»ն, խումբերուն կողմէ բերուած կենդանիներու ցուցահանդէսը: Նշանաւոր էին փիղ մը, Հարաւային Ափրիկէէ, առիւծի ձագ մը, Զայլամներ, անգլիական փոքրահասակ ձիեր, շնագայլ մը, ուղտ մը, ճերմակ մուկ մը, կապիկներ և թռչուններ:

Ուրիշ մասի մը մէջ գետեղուած էր նաև հանքահօր մը, ուր հանդիսականները կը տես-



Գարակէօզեան Որբանոցի սկաուտները կերակուր պատրաստութեան ատեն

նէին հանքի աշխատանքը և արտածումը: Վերջը տեղի ունեցաւ բանուորներու ազատագրութիւնը:

Արշաւներ — Լօնտօնի մէջ արշաւները կազմակերպուեցան վայրկենական՝ օգոսպիւսներով, Գրիսբայ Բալասի մէջ, Windsorի և Westminsterի Tour de Londrei, ծովային, գիտական և արհեստական միւզէններուն և կենդանաբանական պարտէզներու մէջ եւայլն:

Կառավարութեան կողմէ Ալլհամպրայի մէջ ներկայացումն մը տրուեցաւ: Միեւնոյն ատեն տեղի ունեցաւ Ernest Shackletonի կողմէ դասխօսութիւն մը հարաւային բեւեռի մասին՝ սինէմայի ներկայացումով մը:

Մեծ արարողութիւն. — Օգոստ. 1ին պատարագ մը կատարուեցաւ Օլիմպիայի մեծ սրահին մէջ և Եօրքի Արքեպիսկոպոսը քարոզ մը խօսեցաւ:

Վերջին հաւաքումը տեղի ունեցաւ Ուրբաթ 6 օգոստոսին:

Ներկայացումներէ յետոյ, սկաուտները հաւաքուեցան մրցարանի մէջ Սկաուտ Պետի (Պէտրն Բաուրլ) շուրջ, որը պատուիրակներու պետերուն բաժնեց սկաուտական մեծայլներ՝ և իւրաքանչիւրին մէկ մէկ դրօշակ: Ան «բարի ճանապարհ»ի քանի մը խօսքեր արտասանեց:

յետոյ մեռեալներու համար յարգանք մը կատարուեցաւ:

Ամէնէն վերջը նուագախումբը սկսաւ երգել ժողովրդական «Auld lough Syne» մնաք բարովի երգը, որ ամբողջ ժողովուրդը յուզեց: Խանդավառութիւնը կատարեալ էր: Սկաուտներ և հանդիսականներ կը կազմէին մեծ շրջանակներ Պէյտրն Բաուրլ ուսերուն վրայ բարձրացնելու համար, ան խուսափեցաւ՝ իջնալով «Թագաւորական Ատեան»ը:

Այն ատեն պատուիրակութիւնները հեռացան քիչ առ քիչ: Ճեմպօրին վերջացած էր:

Օգոստ. 10ին Թագաւորը Թագուհին Եօրք դուքսը (իրենց տղան) և Մէրի իշխանուհին (իրենց աղջիկը), Սկաուտ պետի ներկայութեամբ, Պրքինկամի պալատին մէջ Բրիտանական երկիրներու սկաուտները աչքէ անցուցին:

Հնդկական պատուիրակութիւնը իր ճամբորդութեան միջոցին ուշացած ըլլալով հասաւ 16 օգոստոսին «Մօրէա» նաւով:

Որոշուեցաւ Լօնտօնի մէջ նոր սկաուտական կեդրոն մը հաստատել:

Սկաուտական պետերու միջազգային հաւաքում մը տեղի պիտի ունենայ իւրաքանչիւր երկու տարին անգամ մը: Առաջինը տեղի պիտի ունենայ Բարիզի մէջ 1922ին:

Ճեմպորի մասնակցող Ամերիկեան սկա-  
ուաներ, Յրանսայի մէջ կարճ հանգիստէ մը  
յետոյ, Ամերիկա վերադառնալէ առաջ այցելի-  
ցին Պիճիքական քանի մը քաղաքներ և պա-  
տերազմի դաշտեր, Վիամպորիս դաշտին մէջ  
մեծ խնջոյք մը սարքեցին, ուր կրկնեցին ի  
րենց նիւստի և Բարիզի մէջ կատարած ցոյ-  
ցելը:

Թարգմ. Գ. Պ. ՈՒՇԱԿԼԵԱՆ



### Գ Ո Ղ Ը

(Սկաուտական կեանք)

(Շարունակութիւն թիւ 26 և վերջ)

Երկու օրէ ի վեր շատ անսովորակ բաներ  
բայց երբեք հաճելի. Լաւագոն տրամադրութիւններով  
սպասեցի այդ անսովորակն որ չյապաղեցաւ. Բիշ վերջը  
քովի սրահին մէջ ոտնաձայներ և կտրուկ խօսակցու-  
թիւններ լսեցի. Դուան բանալիին ծակէն դիտելով տեսայ  
թէ ոստիկան զինուորները շրջապատած են շիք հագուած  
պարոն մը և ոստիկան զինուորներէն մին սեղանին վրայ  
կը լեցնէր Թանկագին գոհարեղէններ, պատելով միան-  
գամայն թէ ինչպէս դատած էր զանոնք. Մեծ զարմանքով  
իմացայ թէ Լաւագոն ցուցումները և վկայութիւնները  
Բիէթօի կողմէ եղած էին:

Ինչպէր մասամբ կուսած էի, երբ հարցապահու-  
մը վերջացած, մարդը բանտ առաջնորդեցին և ոստի-  
կանապետը Բիէթօին ձեռքէն բռնած սենեակէս ներս  
մտաւ ու ըսաւ

— Ահա, Պարոն, ճշմարիտ սկաուտ մը որ պատիւ կը  
բերէ Զեզ. կրնաք ինքզինքնիդ հպարտ ու երջանիկ  
զգալ:

Զէի կրնար սակայն, Բիէթօի ընթացքի մասին առանց  
դիտողութեան անցնել, որով իրեն այսպէս խօսեցայ:

— Բիէթօ, միթէ ներքին է, առանց արտօնութեան  
հետեանալ խօսելէն մթութեան մէջ, ինչպէս գողը կը  
փախչի գիշեր ժամանակ. Դու պարտաւոր էիր ամէն բան  
ինչ իմացնել ու ապա ոստիկանատուն գալ. Այս ընթացքը  
ճշմարիտ սկաուտի մը երբեք վայել չէ:

Ինչո՞ւ տղան ամօթէն կարմրեցաւ, բայց ոստիկանա-  
պետը ամիջնապէս սկսաւ զայն պաշտպանել:

— Պէտք չէ այս տղան յանդիմանել. Փոքրիկն Բիէթօ  
Ոստիկանութեան մեծ ծառայութիւն մը ըրաւ ցոյց  
տալով շատ նշանաւոր և երկար ատենէ ի վեր հեղի-  
նակները փնտուռած գողութեան մը շեղքը:

Խօսքս, Բիէթօի ուղղելով ըսի «Բիէթօ, խնդրեմ, դու  
ինչ բացատրէ եղելութիւնը»:

Զարածճին կարմրած, գրպանէն լրագրի կտոր մը  
հանելով այսպէս պատմեց. «Մէկ քանի շաբաթ առաջ,  
լրագրիներու մէջ կարդացի կարեւոր գողութիւն մը:

Մանրամասնօրէն կը բացատրէին գողցուած գոհարեղէ-  
ններու տեսակները ու ձեւերը, որոնց մէջ խիստ տարօրի-  
նակութիւններ կը գտնուէին: Բոց սոխեցայ այդ ցու-  
ցակը: Երբ լսին մէջ փնտուռեցին մատանին եւ գտայ  
զայն, մտածեցի թէ անոր ձեւը խիստ կը նմանէր գող-  
ցուած գոհարեղէններուն ձեւին կարծեցի թէ անոնցմէ  
մին է որով մէկուն բուն մը չ'ըսի: Փափաքեցայ ձեռքմէ  
խորհուրդ հարցնել, բայց թերեւս ծագելի դառնայի:  
Որոշեցի ոստիկանապետը գտնել ու անոր ցոյց տալ: Որո-  
շուս կատարեցի: Երբ ոստիկանապետին ցոյց տուի, ան-  
միջնապէս ճանչցաւ, Ոստիկան զինուորներ զրկեց Պան-  
դոկ ուր ձերբակալեցին Պարոնը զոր մեղք երէկ տեսած է:  
Խնդիրը պարզուած էր: Անկարելի էր Բիէթօն յան-  
դիմանել: Ինքզինքս հպարտ ու երջանիկ զգացի ու շնոր-  
հաւորեցի իր այս բարի գործը, իրեն դիտել տուի սակայն  
թէ յաճախ, աւանց մէկէն խորհուրդ հարցնելու, այս-  
պիսի ընթացքի մէջ գտնուողները իրենց բարեկամներուն  
այլին կասկածելի կը նկատուին. բան մը որ ոչ հաճելի  
է ոչ ալ յանձնարարելի:

Թարգմ. Ե.

DON LEONARDO PEYTON



Սիրելի սկաուտ եղբայրիկ  
Պ. Է. Թ

Բերայի մասնաճիւղ 1 խումբ

Երկ իմացայ սկաուտ առաջնորդ կարգուիլդ. ախի-  
կայ զիս բաւական ուրախացուց, սա տեսակետով որ,  
անոր մէջ ապացոյց մը տեսայ հաստատող թէ՛ շատ չէի  
սխալած երբ քեզ պարկեշտ և սկաուտութեան համար  
սրտանց աշխատող երիտասարդի մը տեղ դրած էի:

Այս գեղեցիկ առթիւ շնորհաւորութիւններս յայտնելով  
հանդերձ, պիտի խնդրէի որ ընդունէիր թէ աստի-  
ճանի բարձրացումը քու ջանքերուդ վարձատրութիւնը  
չէ միայն, աւելի ճիշդը, աշխատութիւնդ գնահատուած  
ըլլալով պետերուդ կողմէ, անոնք ուզած են անոր սահ-  
մանները քիչ մը եւս ընդլայնել, այս գեղեցիկ ձեւին տակ  
բեւեռաւորելու համար քեզ կարգ մը նոր պարտականու-  
թիւններով. կը կարծեմ թէ երջանկութիւնդ անոր մէջ  
պիտի կայանայ արդէն, որովհետեւ վստահութիւն շահիլ,  
պատասխանատուութիւններ ունենալ և զանոնք զուխ  
հանել, շնորհներ են որ զժբախտաբար շատ մարդիկ չեն  
վայելեր:

Պիտի փախազէի որ՝ միշտ յարատեւելով սկաուտա-  
կան պարտականութիւններուդ մէջ աւելցնելով անոնց  
վրայ առաջնորդի հոգեր և պարտաւորութիւններ, տա-  
նիս զանոնք սկաուտական զուարթ ոգիով և գոունա-  
կութեամբ:

Ինձ համար թերեւս աւելի դուրին և վայելուչ ըլ-  
լար բերանացի յայտնել քեզ շնորհաւորութիւններս, սա-  
կայն, առանց խորհուրդ տուողի հովեր առնելու, պիտի  
մաղթէի որ այս քանի մը տողերուն պարունակութիւնը  
լաւ տպագրուէր միտքիդ մէջ. «Les paroles s'envolent,  
les écrits restent», կ'ըսէ ֆրանսական առածը. եւ արդէն  
գրութիւնս աւելի եղբայրական դարձնելու, և անոր ի-  
մաստը աւելի հաստատ արժանագրելու համար սքսիլդ  
մէջ, զայն կը պատկերազարդեմ պզտիկ յիշատակով մը  
բաղուած քու սկաուտական կեանքէդ. Օրտանց մաղ-  
թանքներ կր'նելով շնորհաւորութիւններուս հետ մնամ՝

Անկեղծ եղբայր սկաուտութեան մէջ

25 Ապրիլ 1921 Կ Պոլիս

162



ԲԱՆԱԿՈՒՄ  
(CAMPEMENT)

Բանակումի կեանքը դաստիարակիչ արժէք ունեցող շատ բաներ կը ներշնչէ տղոց. բարոյական այս դաստիարակութիւնը չկրնար իր նպատակին չհասնի՝ վասն զի տղաք քաղաքի և տան ազդեցութիւններէ հեռու են:

Խմբապետներուն ըսելիք շատ բան կայ այս մասին, բայց գոնէ միայն պէտք է ըսուի թէ պէտք չ'է հանգիստ վրանի կեանքով իրենց ճաշակին յարմարած բանակումներով գոհանան: Խմբապետները իրենց տղոց հետ կը վերապրին իրենց փորձառութեան կեանքը, կամ իբրև պատանի իրենց երեւակայած ու ցանկացած կեանքը: Պէտք չ'է փախցնեն լաւագոյն առիթը որ կրնայ տալ մեծ հրապոյր բանակումին եթէ ան՝ զօրաւոր երեւակայութեան տէր ձեռքերէ կը կառավարուի:

Բայց դժււք, առաջնորդներ, կրնաք ունենալ կարող խմբապետ մը և այնուհանդերձ բանակումը կրնայ ոչինչ արժեք կորսնցնել իր գեղեցկութիւնը եթէ ձեր պետներուն հանդէպ հաւատարմութիւն չ'ունիք. բոլորդ ալ մօտեցէք իրարու և խորհեցէք՝ թէ ինչու առաջնորդ եղած էք. անշուշտ թէ այդ աստիճանը իբրև ցուցադրութիւն վարձատրութիւն մը չ'է տրուած ձեզի, այլ ան կը նշանակէ մասնաւոր պարտականութիւն մը որ պէտք է կատարուի, իբրև

առաջնորդ ընելիք բաներ կան և պէտք է՝ որ այդ բաները ընէք, և այն ատեն խմբապետին ձեր վրայ ունեցած վստահութիւնը պարապը պիտի չ'երթայ: Երբ սկառուները տեսնեն թէ գործերնիդ միշտ լրացած ու լաւ կատարուած է, պիտի խորհին թէ իրապէս արժանի էք առաջնորդ եղած ըլլալու: Զգացուցէք ձեր տղոց թէ ձեզի հնազանդիլ շատ դժուար չ'է: Զգացուցէք մանաւանդ թէ երբ խմբապետէն հրաման մը ստանաք, բոլոր խմբակը պատրաստ է զայն իսկոյն և մեծ եռանդով կատարելու:

Բանակումը մէկ կամ երկու վտանգ ունի որոնցմէ սակայն շատ դիւրաւ կ'զգուշանայ խելացի բանակողը: Բանակումը երբ կատարուի պէտք եղածին պէս անգին օգուտներ ունի որոնցմէ պէտք է գիտնալ օգտուիլ: Բանակումի զլխաւոր օգուտներն են.

Բարոյականի զարգացում և կարգապահութիւն,

Առողջութիւն,

Խնայողութիւն,

Հնարախտութիւն, ներշնչում,

Առաջնորդելու փորձառութիւն,

Woodcraftի (անտառագիտութիւն) ծանօթութեանց ընդարձակում:

Կարելի չ'է թէ գտնուի սկառու մը որ բա-



**Հ. Մ. Ը. Մ ՁԵՐԳ Մասնահիւրի՝ Պրուսայի Սկաուտներ**

Մէջտեղը առաջնորդ Սարգիս Ծ. Վրդ. Սարգիսեան, շուրջը յունական Յրդ Զօրաբանակէն ճրամանատարներ  
 Զօր. Փօլիմէնախօս, Զօր. Թրիբուբիս եւ Տիկինը, Զինուորական կառավարիչ Կնդ. Գուստուրուս:

նակուածի կեանքը չընկատէ իր ամբողջ կեանքին ամէնէն մեծ բանը, բան մը որմէ հաճելի յիշատակ մը կը պահէ և որուն կրկնութեան անհամբեր կ'սպասէ:

Բանակելու երթալէ առաջ որոշ գաղափար մը կազմելու է թէ ինչպէս պիտի անցնին օրերը. յայտագրին պատրաստութեան պահուն նկատի պէտք է առնել տղոց պէտքերը և յարմարիլ անոնց: Բանակումին կանոնադրութիւնը կարելի է միայն պահել յայտագրի մը գոյութեամբ՝ որուն բաժանումները սակայն կը պահանջեն խիստ մեծ խնամք, յատկապէս որոշ և բաւականաչափ հանգիստի և քունի միջոց, որոշ ժամեր ճաշերու համար: Սկաուտական դասախօսութեանց ոչ չափազանցում: Խաղերը ընտրել այնպէս որ տղոց սկաուտական ծանօթութեանց աւելնալուն նպաստին: Ազգասիրական նշխարում, ինչպէս դրօշակի յարգանք: չըմտնալ ընդհ. մաքրութիւնը:

Նախապէս մտածելիք բաներ են նաև.

- Բանակումի պէտի ընտրութիւն,
- Միասին սանելիք գոյներ,
- Երբայիք վայրը,
- Մախիւր:

Ընտրուած վայրը լայնօրէն պիտի նպաստէ բանակումին յաջողութեանը. այդ վայրը փափագելի է որ հետեւեալ պայմանները լեցնէ. ծառաշատ, արեւմտեան հովէն պատսպարուած, մէկ կողմը հարթ դաշտ մը խաղերու և հաւա-

քուններու համար, առատ ջուր և ոչ փափաղելի դրացիներու բացակայութիւն, զգուշանալ ընտրել այնպէս տեղ մը ուր ջուրը կրնայ վաղի անձրեւի պարադային, քաղաքէն հեռու, որովհետև ասիկա տղոց կուտայ արկածախնդրական զգացում և ձեռներէցութեան ոգի:


Նորընծայ սկաուտը, սկիզբը աւելորդ կարգ մը գոյքեր պիտի առնէ իր հետ և պիտի մոռնայ իրական պէտք եղածները. առաջնորդը կը հսկէ այս կէտին վրայ ու լաւ է որ ցանկ մը պատրաստէ իր անփորձ տղոց համար, առանց մոռնալու թէ վերմակը պէտք է տաք ըլլայ և վրանի յատակին վրայ փռելիք լաթը անթափանց: Աղտոտ կոշիկներով ոչ ոք պիտի քալէ վրանին մէջ, առտուն գետնի մոմլաթը մէկ կողմ ծալեցէք և վերմակները (արեւին ենթարկելէ յետոյ) վրան շարեցէք:

Բանակումի յարմար և լաւագոյն վրանը, մանաւանդ կարգապահական նկատողութիւններով, փոքր, երեք կամ չորս հոգիներու կամ առ առաւելն մէկ խմբակնոց վրանն է. այսպէս որ և է արդելք յառաջ չգար խմբակին կազմակերպական գործունէութեան:

Պարապ ժամեր անցնելու սխալը յաճախ պէտք չ'է կրկնել, եթէ աչքերը ու ականջները բաց ըլլան, շատ հետաքրքրական բաներ կարելի է երեւան հանել ընտրութեան մէջ, և արդարև ազդեցութիւն մը պէտք է ունենան, ծառերու կանանչը, տերեւներու շունչը, արեւին լոյսը,

բաց երկինքը, անտառներու անուշ բուրուժը, և բանակումի կրակին խորհրդաւոր հանգամանքը, այս բոլորը պիտի քաշեն դէպի իրենց բանակող սկաուտը:

Այժմ կ'ենթադրեմ թէ բոլոր սկաուտները բանակումի սիրահարներ են. ասկաուտիզմ կը նշանակէ բանակում» կ'ըսէ սկաուտ հեղինակ



Նորընծայ սկաուտը բանակումի կ'երթայ կապանի ծառի մը պէս քիտնաւորուած:

մը. վկայականները, Ա. Բ. կարգի քննութիւնները ոչինչ կ'արժեն եթէ բանակում չ'էք ընել, գիտէք ընել և չ'էք ընել, կամ կ'ընէք ոչ պէտք եղածին պէս:

Չ'էք երեւակայեի թէ tenderfoot սկաուտ մը կրնայ անտառ երթալ, բանակիլ և լաւ ատեն անցնել, անշուշտ ոչ, հին սկաուտներ նորընծաներու անճարակութիւնները, նեղութիւնները և ուրիշներուն պատճառած անհանգստութիւնները կրնան պատձիլ: Օր մը անտառին մէջ չրջած պահուանչ մարեցի սկաուտ մը, նստած քարի մը վրայ ու նեղացած երեւոյթով: Ետեւէն մօտեցայ և մինչև որ չեկայ կանգնիլ ճիշդ իր առջևը, չըլսեց և չընչմարեց զիս ինչ որ խորհիլ տուաւ ինձ թէ նորընծայ մըն էր. չ'էի սխալած: Իսկոյն սկսանք խօսիլ, և իմացայ թէ իր խումբը մօտերը բանակում հաստատած էր և թէ իր նեղութեան պատճառը իրիկուան ճաշին համար չոր փայտ գտնելու անկարելիութիւնն էր: «Առաջնորդս կ'ուզէ որ ամբողջ կերակուրին փայտը ես ժողվեմ, բայց ծառերը կանանչ են փայտը թաց է» . լաւ. միտին փնտռենք ըսի, ու սկսանք: Բաւական զարմացաւ երբ տեսաւ թէ չոր փայտ կը գտնէինք մացառոտ թուփերու մէջէն, եզերքէն, տակէն, առջին անդին, բայց շատ քիչ անգամ ծառերու վրայէն, քառորդ մը յետոյ չոր փայտի մեծ քանակութիւն մը հաւաքուեցաւ որը փոխադրելու համար ստիպուեցայ օգնել իրեն:



Բանակումի ամէնէն նախական պէտքերէն մին է կրակը, և այդ կրակը պէտք է լաւ ու շուտ ըլլայ:

Վրանէն ներս հանգիստ պէտք է ըլլայ, գետնի կարծրութիւնը մեղմացնելու է: Վրանի գետնի լաթին վրայ պառկիլ ու վերակը ուղղակի վրան առնել, նորընծայութեան նշան է. պէտք է վերակին մէջ փաթթուիլ տակը՝ ինչպէս վրան լաւ ծածկել և գլխէն զատ ոչ մէկ կողմին ճեղք ձգել:

Բանակելու չըգացած նախապէս պատրաստուած ըլլալու է մասնաւորապէս կապերուն, նախնական դարմանի և հիւանդ փոխադրելու ծանօթութիւններ ունենալ, կացին գործածելու եղանակ, փայտ հաւաքել, կրակ շինել, կերակուր եփել, դրօշակախօսութիւն գիտնալ:

Շար.

Ա. ՏՄԵՆԱՆ



ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒՆ

Գ. Դ Ա Ս Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԻՆՉ ՊԵՏԲ Է ԸՆՆԵԼ ԱՌԱՋԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ  
ՀԱԻԱՔՈՅԹԻՆ

Զուարճալի խաղեր. — Սոյն խաղերը յը խաղացուին տղոց գուարթութիւնը վառ պահելու և ձանձրոյթը վանելու համար: Այս դասակարգէն են հետեւեալ խաղերը: Ա. Ոգիի խաղը, Բ. Պաստաւս ե՛ս խաղը, Գ. Եօրը հոգի վերցընողը:

Ոգիի խաղը. — Սկաուտները քով քովի կը շարուին սեղմօրէն: Աջ ծայրէն խաղին վարիչը քովինին կ'ըսէ. «Այս գիշեր ոգի մը տեսայ» միւսը կը հարցնէ, «Իրա՞ւ, ի՞նչ ըրաւ». «այսպէս ըրաւ կ'ըսէ առաջինը և աջ ձեռքը վեր կը բարձրացնէ: Երկրորդը նոյն բանը քովինին կը կրկնէ և այսպէս շարունակաբար: Հետզհետէ վարիչը նոյն կերպով կ'երկարէ ձախ ձեռքը և յետոյ աջ սրունքը և երբ ամէնքը ձախ ոտքերնուն վրայ կեցած դժուարաւ կը ջանան պահել



Սամաթիոյ Սկաուտները արշաւի մը պահուն՝ աղուէս որսալէ վերադարձին կը նստին ջուրին եզերքը

իրենց հաւասարակշռութիւնը, վարիչը ու ժող մը կը հրէ մէկ ծայրէն, և այս պէսով շատերը անակնկալօրէն գետին կը փռուին:

Պատրաստ ես խաղը. — Երկու սկաուտներ աչքերնին կապած գետինը կը ծնրադրեն դէմ դիմաց: Զախ ձեռքերնին առարկայի մը վրայ կը հաստատեն իսկ աջ ձեռքով կը բռնեն պըլորուած թակինակ մը: Մէկը միւսին կը հարցնէ «պատրաստ ես» միւսը «այո» կը պատասխանէ և առանց ձախ ձեռքը առարկային վրայէն վերցնելու կ'աշխատի խուսափիլ հարուածէն զոր ընկերը պիտի ջանայ տալ իրեն ձեռքի թաշկինակով, իր ձայնէն առաջնորդուած: Այսպէս փոխադարձաբար:

Եօրը հոգի վերցնողը. — Մէկը կռնակի վրայ կը պառկի գետինը, այն որ կը յաւակնի թէ կրնայ 7 հոգի վերցնել: 6 հոգի իր երկու կողմերը կը նստին ոտքերնին պառկողին փորին վրայէն խաչածեւելով: Երդը պէտք է փորի վրայ պառկի տակը պառկողին վրայ, որ ձեռքերով լաւ մը կը բռնէ զայն, այն ատեն երկու կողմը նստողները կ'սկսին հարուածներ տեղալ, այդպէսով ծուղակը ինկող աղուն վրայ որ՝ պէտք է անծանօթ մը եղած ըլլայ այդ խաղին:

Խուսափիլ կոչը. — Խուսափը իրենց յատուկ կոչերը կը հնարեն, որոնք նպատակ ունին խանդավառել սկաուտները: Սոյն կոչերը կը կրկնուին դաւախօսութեանց լրանալէն յետոյ, ար-

դոյ տրամադրութիւնը զուարթ պահելու համար հաւաքոյթներէն ալ դուրս: Ահաւասիկ հատ մը:

Սկաուտները շրջանակ մը կը կազմեն, խըմ բապտը մէջտեղը կը կենայ և բարձրաձայն կը հարցնէ.

Խմբապետը. — Տղաք ձանձրացած էք:

Սկաուտները. — Ո՛չ:

Խմբ. — Ուրա՛խ էք:

Սկա. — Այո՛:

Խմբ. — Ուրեմն առիւծի մոնչիւն մը արձակեցէք:

Սկա. — Ո՛ր... ո՛ր... ո՛ր...

Խմբ. Աւելի բարձր, առլւծներ, աւելի բարձր:

Սկա. — Ո՛ր... ո՛ր... ո՛ր...

Խմբ. — Հրաշալի էք առիւծներս հրաշալի էք: Եւ դասախօսութիւնը կը վերջանայ:

Հետախուզական նշաններ. — Սկաուտական արշաւներու միջոցին խիստ կարեւոր եղող նշաններ են հետախուզական նշանները, որոնք կը ծառային ճամբաները որոշելու և զանազան լուրեր տալու այդ ճամբէն անցնող սկաուտներուն:

Սոյն նշանները կը մարդեն սկաուտները և պատճառ կ'ըլլան որ անոնք քայլած ատեննին արթուն ըլլան և զննեն իրենց անցած տեղերը: Ասոնք արուեստական կերպով սկաուտներու կողմէ պատկերացուած նշաններ են ընդհանրա-

պէս սակայն կը վարժեցնեն սկաուտները ճշնշ նսլու հետեհետէ բնական հետքերն ալ որպիսին են մարդոց, կենդանիի և կառքերու հետքերը, և անոնց դիրքէն և երեւոյթէն օգտակար հետեւութիւններ հանելու:


Հետախուզական նշանները միմիայն պէտք է դնել ճամբուն աջ կողմերը առանց մոռնալու սկաուտական ստորագրութիւնդ դնել անոնց տակը:

Սոյն նշանները դնելու համար զանազան միջոցներ և նիւթեր կարելի է գործածել: Օրրիւնակի համար ժայռերով, հողին վրայ փորելով, ցիցերով, խոտով և ծառերու վրայ փորագրելով:

Այսպէս, խոշոր քարի մը վրայ դրուած փոքր քար մը կը նշանակէ թէ այդ է ուղիդ ճամբան:

Դարձեալ փոքր քար մը զետեղուած խոշոր քարի մը վրայ և այդ խոշոր քարին աջ կամ ձախ կողմերը դրուած ուրիշ քար մը կը նշանակէ թէ դէպի աջ կամ ձախ պէտք է դառնալ, քովի քարին դիրքին հասնայն:

Հողի վրայ կարելի է դնել սրածայր առարկայով մը: Կարելի է հողերը տափակ գետնի մը վրայ հաւաքելով կաղմել ունէ նշան, օրինակի համար նետ մը, որ ուղղութիւն ցոյց կուտայ, կամ խաչաձեւը որ անել ճամբայ կը նշանակէ:  
(Շարունակելի) **Ք ԺՊՏՈՒՆԵ**



### ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՀԱՍԹԷՆԵՐ

Դիւրութեան համար հետեւեալ հասցէները կուտանք մեր սկաուտներուն որ կարենան թղթակցիլ օտար և հայ սկաուտներու հետ: Հետզհետէ պիտի հրատարակենք ուրիշ հասցէներ, կը յանձնարարենք մեր հայ սկաուտներուն մեզի դրկել իրենց անունները և հասցէն յստակ գրուած:

We beg from scout brothers all over the world wishing to correspond with Armenian Scouts to give their proper adress which will be published in our fortnightly paper.

Please note meantime in our present and following numbers names and addresses of Armenian Scouts wishing to correspond.

Our official adress is: U. A. C. P. et Scouting  
26 Khorassandjian Han  
Sirkedji—CONSTANTINOPE

Will Sibley. 103 Taunton Road LEE LONDON S. E. 12

Giecomme Cesare. Via Salaria 95, Quartiere (34) ROMA

Hat-hik Kutchukian c/o Garbis Dzovikian  
11 Via Ariberti MILANO

François Sautter. Chateau de Mayeufelz.  
Pratteln Près de Bâle SUISSE

Henri Moine. 61 Grand Rue Croix Rousse LYON

Sirak Sirakian (c/o A. Azarian) Rue Salah-el-Dine  
ALEXANDRIE

Vessani Alespandro Via Cesarea 10-20 GENOVA (Italia)

Rakka "Vedels Egne" Jolianne Secher Rasernen  
Artilleriney COPENHAGEN (Danemark)

Lucien Chouboukjian. 45, Rue Louis Hap Erterbeck  
BRUXELLES

A. T. Newman S. E. 565 West 139-a St. New York City  
Cheaf Scout of Armeniens at Smyrna (U. S. A)

Leon Lecolle. 17 Rue du Pont-aux-Choux, PARIS 3e

James Beard. 160 Madison Street, Brooklyn, NEW-YORK

Mr. Zaven Hapetian, c/o Bakirdjian Frère, SMYRNE

Armenian Scouts wishing to correspond with scout brothers in other countries. adress:

26 Khorassandjian Han  
Sirkedji—CONSTANTINOPE

Հայ սկաուտներու անուններ, որոնք կրնան թղթակցիլ ուրիշ երկիրներու սկաուտներու հետ:

1. Ardavast Vartanian. 1/III
2. Kégham Bostandjian. 1/1
3. Yenovk Der Atanassian, 1/1
4. Edvard Sayebalian, 18/1
5. L. Sarouhan 2/1
6. Karayan Yervante 1/III





### ՄԱՐՉԱՇԻԱՐԶ

## Չ Ա Ն Ա Չ Ա Ն Լ ՈՒՐ ԵՐ

Մի.ս.հ.ս. (աշխարհի նիզակի ռեֆորմէն և ուղիմպիական շամբիոն) Ֆիլիանասի մէջ մրցումի մը միջոցին նիզակը 69.93 մէթր կը նեւտէ, ինչ որ մտաւարապէս 4 մէթր տարբերութեամբ աշխարհի նոր ռեկօն մըն է եթէ մրցումը պաշտօնական ժիւ.ս.ի ներկայութեան եղած է:

\*. 20 ՔԻԼՈՄԵՏՐ ՎԱՋՆԵՐԻ աշխարհի պաշտօնական ռեկօնը կտարած:

Եւէտացի Մակնիստէն Գոթպէրի մէջ Եւէտի 20 քիլոմէթր շամբիոնի վրայ կը շահի 1 ժամ 07' 12" <sup>2</sup>/<sub>10</sub> էն կտրելով: Այս ժամանակը կը կտարէ աշխարհի սէքօնը որ թէթիւ Գուէ՛նայէնին կը պատկանէր 1 ժամ 07' 40" <sup>2</sup>/<sub>10</sub>ով և կը մտնեայ անոր նշանաւոր եզրօր Հանս Գոմէնպիէնի ժամանակին, որ պաշտօնապէս չէ ընդունուած, (1 ժամ 07' 04" <sup>4</sup>/<sub>10</sub>), ինչպէս նաև ուրիշ ռեֆորի

մը, որ նոյնպէս պաշտօնապէս չէ ընդունուած, շուէտացի Անիգո ինին 1 ժամ 06' 55" <sup>8</sup>/<sub>10</sub>:

\*. 1000 Եւրոպայի ռեֆորը կտարած: Լոն.ան Պո.ու.ն Բանտիլմանիայի նշանաւոր արիւթը և նոյն քաղաքին համալսարանի վազքի իմբասպետը 1000 եւրոպայի ռեֆորը կը կտարէ, մրցումը Ֆիլաթէլֆի մէջ կ'ըլլայ հեկտիկի ձեւի տակ, Պո.ու.ն հեռաւորութիւնը կը կտարէ 2' 12' <sup>1</sup>/<sub>10</sub> էն նարիկինը կը պ. տկանէր աշխարհի էն նշանաւոր վազքներէն Մալ Եէրուտի 2' 12" <sup>2</sup>/<sub>10</sub> ով 19:0 էն ի վեր:

\*. Աւստրիացի Ուէյնսլոֆ 110 մէթր արգելքի աւստրիական թէքօրը կը կտարէ 15" <sup>4</sup>/<sub>10</sub> էն:

\*. Գոտերս երկու լաւ վազողներ Նիլսոնի և Պիմկն, ուղիմպիական մէջ իրաւ. հեռ մրցելու տուիթը պիտի ունենան և այս պատահութեանն ոգտուելով անոնք պիտի աշխատի: աշխարհի թէքօրը կտարելու:

\*. Գոթպէրի մրցումներուն մէջ Հանս Իէթէն ան Տալ Եւրոպայի ձողով զատարելու թէքօրը կը կտարէ 3.76 մէթր ցատկելով, նոյն օրը Գալաա 5000 մէթրը 16' 1' էն կ'աւել:

\*. Լրիւնի վազողը որ լաւ տրա աղբուրեան մէջ է 800 մէթրի մրցոմ մը կը շահի 1' 57" <sup>1</sup>/<sub>10</sub> էն, նոյն օրը Թոնի 2000 մէթրը 5' 42" էն, Լիլան 200 մէթրը 23' էն կը շահին և Ջալակ'ան սկաւառակը 43.11 մէթր կը նեւտէ:

\*. Գիքմէն Ռիւկէնի միջազգային մրցումներուն 10 քիլոմէթր կը շահի 31' 40" <sup>4</sup>/<sub>10</sub> էն ինչ որ շատ քե-


### ԽՄԲԱՐԵԱԻ

Վերջին Ռուս Մարզական Քիւլի կողմէ կազմակերպուած եր իմբարշտ մը, վազքի սկսաւ Թաֆսի Մարզարանէն, Ֆիաթ Գաւաճի—Համաւ—Պոլսոյի—Պուլի. Հիւանդանոցի ետեւէն Ազատութեան Բլուրի վրային դրամվային ձամբան միջին Թաֆսի, մօտաւորապէս 7-8 իլոմէթր—չժրադարար իջիւր իր սեղեկագիրը չտուաւ սակախն:

ԱՐԴԻՆՔ. — Ա) Գ. Արոս Մամիկոնեան 28' 15" կԱ. Բ) Գոնոսի, Գ) Սերկիլիֆ, Դ) Գ. Քիշիշեան, Ե) Վ. Աւագեան:



Խմբարշտին մասնակցողները



Աշտո՛ վազքը վերջացուցած պահուն



Վազքի պահուն

զեցիկ ժամանակ մըն է, նոյն օրը լիցնա 400 մէթրը 51'' 1/10 էն և լընտիզին 1500 մէթրը 4' 8'' էն կ'աննէ:

\*, Լոզայու մէջ բէքուներու անկումը սարսափելի հանդամանք մը առնել սկսաւ, այս անգամ ուրբեւն վերջ կ'որգը կիներուն եկաւ 30 մայիսին Օր. Պլոյ-հըթուի, ամերիկայի շարժումներու մրցման ատեն աշխարհի 100 եարասի բէքուը կը կտրէ 1' 5'' 2/10 էն: (Նարիկինը կը պատկանէր Թանի Տիւուայի 1' 6'' ու, Նոյն մրցումներուն Օր. Պլանհըթուի և Օր. Նէտէլո 50 եարասայի բէքուը 28'' 1/10 իջեցուցին, ժամանակ մը որ այրերէն քիչեր կրնան առնել: Աւրիշ օր մը Օր. Պլանհըթուի կը կտրէ նաև 220 եարասայի աշխարհի բէքուը 2' 53'' էն, Նարիկինը կը պատկանէր Թանի Տիւրասաքի 2' 56'' ու, Աւրիշ ամերիկացի մը Օր. Նարլօթ Պալ 150 եարասայի բէքուը 1' 49'' 3/10 իջեցուցած է, Նարիկինը կը պատկանէր անգլուհի Օր. Նէյմի 1' 53'' 3/10 ու:

\*, Օթըն-Օքսֆորտի լոզայու մրցումներուն մէջ Հասկին կրցաւ 100 ետուան 56'' երկ. սքանչելի ժամանակին մէջ առնել:

\*, Միջազգային ողիմպիական Ռուսկայր մէջ, Ռուսկայի ողիմպիականը որու կը մասնակցէին քանի մը ազգեր՝ մեծ արդիւնք մը չէ տուած, որովհետև մասնակցողներուն մէջ հազի քանի մը հանչուած անուններ կային, մրցումները հետեւեալ արդիւնքները տուած են 100 մէթր ժամուան (Ֆրանս) 11 1/10 էն որ 200 մէթրի ալ առաջինը ելան, 400 և 800 մէթր Տէլլան (Ֆրանս) առաջինը 51'' 2/10 էն և երկրորդը 2' 1/10 էն կտրելով, Վասուիք (Էստոն) 1500 կը շահի 4' 8'' 1/10 էն:

Ինչպէս կ'երեւի այս բէքուները որոնց մէջը կան քանի մը լու մարզիկներունը այնչափ մեծ բաներ չեն և պէտք չէ որ մեր ակթիկները մեծ ողիմպիականներու բէքուներ, կամ աշխարհի են նշանաւոր մարզոց բէքուները կորցայով յաւաստան:

### ԳԱՌՈՒՆՆԻՒՆԻ ԵՒ ՏԷՄՈՒ

Կոփա նարտուիներն այն մեծ մրցումին թուականը որ ամիսներէ ի վեր կ'զբաղեցնէր բոլոր աշխարհը, որչափ տուած է Յուլիո Ձին:

Գանի մը պղտիկ տեղեկութիւններով պիտի բացատրենք անոր ժամանակակիցը երկարելը: Կազմակերպողները չէին կրցած համարձակիլ վճարական որոշում մը տալ, որովհետև երկկողմանի պահանջուած գումարները առանձինն հարստատուութիւններ էին, այդ գումարները գտնելու համար խորհիլ պէտք էր: Ամիսէ մը ի վեր բազմաթիւ գործուորներ սկսած էին շինել այն ահագին շէնքը որ 50,000 հոգի պիտի կրնայ պարուենակել, իսկ ռիկկո՝ որուն յատակագիծը պատրաստուած է կոփամարտիկ երկրաչափի մը կողմէ, աշխարհի վրայ նմանը չի տեսնուած ռիկկո մը պիտի ըլլայ: Հակառակ կոփամարտի մրցումներուն գոց շէնքերու մէջ ըլլալուն, այս վերջին մրցումը պիտի ըլլայ բացօթեայ որովհետև այդ ահագին տարածութեամբ տեղը գոցելու համար ահագին ծախքերու կարօտ է: Այս շէնքէն զատ կազմակերպիչները մասնաւոր շոգեմու մը տրամադրած են Սարալու

չէն Ամերիկա փոխադրելու մեծ մրցումը դիտելու և զոգ հետաքրքրները: Ենթին մէջը թէլէֆօնի և ակթիկ հեռուագրի կայաններ կան որոնք մրցման ամբողջ տեւողութեանը պիտի գործեն աշխարհի զանազան կեդրոններու հետ: Ամերիկեան սինեմաի ընկերութիւնները մասնաւոր տեղեր շինած են մօտէն չը տեսնողներուն դիրքութիւն տալու համար, այս ընկերութիւնները երկու կոփամարտիկներուն ահագին գումարներ կուտան անոնցմէ որ տունութիւն առնելու համար: Այս չափ ծանօթութիւն բուսական պիտի ըլլայ կործեմ մրցումին կարեւորութեան մասին գաղափար մը կազմելու համար:

Նաեւ պիտի ուզէին այս տեղեկութիւնները կարգաւէ վերջ գաղափար մը ունենալ երկու խաղացողներու մասին, աւ մասին միայն ստարթերթեր կրնան լիովին տեղեկութիւն տալ, սակայն անոնք ալ մտնէ կը իրենց խաղացողները կը պաշտպանեն, իրանացիները Գառփանթիէին վրայ յարստան, իսկ Ամերիկացիները Տէմսէին անյազթելի է կ'ընեն: Այսուհանդերձ մենք մեր անմնական գաղափարը պիտի գրենք:

Գառփանթիէ 21 տարեկան է, 14 տարեկանէն սկզբած կոփամարտութեան, իսկ Տէմսէյ 24 տարեկան է և 19 տարեկանին սկսած: Այնպէս որ Գառփանթիէ աւելի լայն փորձառութիւն ունի: Ան պատեքրուածէն առաջ, քանի մը փոյլուն յաղթանակներէ շուրջած կ'ուզէ աշխարհի շարժումին հետ չափուիլ, իրաւ մեծ յանգուցութիւն է, սակայն մաղթենք որ 1912ի մրցումին չի նմանի, նոյն տարին ան մրցեցաւ և յաղթեց Աւստրալի և Ամերիկայի լուսագոններուն, ասոր վրայ ան ուզեց ամերիկացիներուն էն նշանաւորներուն, Պիլի Ռէքսի և Թուսք Դիօզի հետ չափուիլ, սակայն երկուքէն ալ պարտուեցաւ չարաչար կերպով այն ժամանակ երբ ան հիմակուան վիշակէն աւելի լու էր, այն տարիներն էր որ ձօժ ձանէթի հետ անքան գեղեցիկ մրցում մը ըրաւ: Պատեքրուածի չորս տարին երբ Տէմսէյ յաղթանակէ յաղթանակ կը բարձրանար, Գառփանթիէ զինուորութիւն ըրաւ, անկէ վերջ կուտեցաւ Պէքէթի հետ որ իր կարգին կ'ուզէր Տէմսէյի հետ մրցիլ, ան ժամանակ շատեր կը կործէին որ Պէքէթ քան մըն էր, բայց ան Գառփանթիէն պարտուեցաւ առաջին ասուներն, ահա ասոր վրայ Գառփանթիէի ժողովիկականութիւնը աւելի եւս բարձրացաւ հակառակ որ անոր տարած յաղթանակը մեծ արժէք մը չուներ, որովհետև Պէքէթ կարծուածին չափ չէր, ան Գառփանթիէէն 4 ամիս վերջ պարտուեցաւ նաև 45 տարեկան Թուսքի Մոսանէ Զրդ Էոսուտտին, Մոսանէ՝ որ իր վերջի մրցումները կ'ընէ: Անկեց վերջ Գառփանթիէ կըսուեցաւ ամերիկացի Լիւիսեքիի հետ, որ մինչև այն ատեն մեծ համբաւ ուներ, Գառփանթիէ գայն ալ իր գիրքէն վար սուա եւ այսպէս տերեւ մը եւս աւելցուց իր յաղթանակի պատկին վրայ: Լիւիսեքի ուրիշներու հետ ալ մրցեցաւ և նոյնիսկ էն անարժէքներէն պարտուեցաւ: Ահա պատեքրուածէն վերջ Գառփանթիէի ռիֆօնը ըրած է երկու մրցում և յաղթած, սակայն աւ յաղթութիւնները ըստիս չեն արժեք անոնք որոնք պատեքրուածէն առաջ շահած է: Հիմայ ան կ'ուզէ Տէմսէյէն խել շարժումութիւնը, արդեօք պիտի կրնայ: Կարծեմ թէ քիչ մը դժուար պիտի ըլլայ, որովհետև Տէմսէյ Պիլի Ռէքսէն և Թուսք Դիօզէն և ձօժ ձանէթէն աւելի սարսափելի է, ան ուժի մեծերանոց մըն է և հարուածի մեքենայ: Տէմսէյ իրմէ շատ աւելի թիթեւ և շատ աւելի ծանցերու հետ մրցած է, իր յաղթութիւնները ընդհան-



ՏԷՄՍԷՑ



ԳՍՈՐԱՆԹԻԷ

բազէս առաջին ռաունսներուն շահած է, քանի մը մըր-  
ցում միայն 12 ռաունս երկարած են, ան հակառակ իր  
90 ֆիւթ ծանրութեան՝ գրեթէ Գարբանթիէի չափ արագ է,  
սակայն ոչ անոր չափ զիտական, կռուող է, ունի զօ-  
րութիւն մը՝ հարուածի ուժգնութիւն մը որ մինչեւ հի-  
մայ գրեթէ ոչ մէկ կռիւտարտիկ ունեցած է: Ան կրցած  
է 2-3 ռաունսէն տապալել 113 ֆիւթոց մարտիկներ,  
այսուհանդերձ չի մոռնանք ըսելու որ ան չէ հասած իր  
գագաթնակէտին, ան ունի զեղեցիկ ապագայ մը:

Տէմսէյ ունի նաև երկար հասակ մը և երկար թւեր  
որոնք՝ բաւական օգտակար պիտի ըլլան իրեն այս մասին  
կարելի է պզտիկ ծանօթութիւն մը տալ Գառբանթիէ  
Պոմպարտիէ Վէլ մրցումէն, Վէլս աւելի երկարահասակ  
և նուազ արագ ըլլալովը կրցաւ առաջին երեք ռաունս  
ներուն Գառբանթիէն 3 անգամ նոսր ընել, 4րդին  
էր որ Գառբանթիէ անոր տկար կողմը, որ ստամոքսն էր,  
գտնել, և այն ատեն Վէլս նոսր եղաւ քանի մը  
հարուածով, եթէ Վէլս Տէմսէյին զօրութեան կէսը ու-  
նենար ան պիտի կրնար առաջին ռաունսին զայն նոսր  
ընել: Տէմսէյ մօտաւորապէս Վէլսին հասակը ունի  
անոր ուժոյն է, Տէմսէյ ունի ստամոքս մը որ շատ քիչեր  
ունին: Գառբանթիէ եթէ յաղթելու յոյս մը ունի ան ալ  
Տէմսէյին փորը մեկնելու եղանակով կրնայ ըլլալ որովհետև  
Տէմսէյի պէս երկայն մէկու մը կզակին զարնելու համար  
շատ ճիգ կը վատնուի և հանդիպած հարուածները տկար  
կ'ըլլան: Այսուհանդերձ չի մոռնանք ըսելու որ Գառբան-  
թիէի վարպետութիւնն ալ իր կարգին իր դերը պիտի  
խաղայ: Վերջապէս վճռական ամէն արգիւնք Յուլիս 2ին  
յայտնի կ'ըլլայ:

որ մարմամարզարանին մէջի բոլոր գործիները նոսր  
ըրեր է 11, ամէնէն վերջ մրցում մը կ'ընէ Բրնիլնկ Պեկին  
հետ, քիչ մը հանդարտ խաղալէ վերջ այնպիսի կատա-  
ղութեամբ կ'սկսի հարուածել որ զնդակը իր կապուած  
տեղէն կը քակուի և կ'երթայ հետաքրքիր հանգիստ-  
տեսներուն համարը տալու: Այնպէս որ ներկաները  
կ'սկսին կամաց կամաց դուրս ելլել նոսր ըլլալէ  
վախնալով ...

ԳՍՐԻԷԼ ԲԷՇԵՇՅԱՆ



ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պեկին.— Պեկինի Սկաուտները դարձան համար  
կազմակերպիչին ցուցահանդէսի մրցում մը:  
Պրիւքսէլ քաղաքը խոստացած է 10,000 ֆրանքի  
փոխատուութիւն մը ընել Պեկինի Սկաուտներուն,  
մասնաւորապէս դպրոցներու մէջ զարգացնելու համար  
Սկաուտութիւնը:  
ՉՈՒՍԵՐԻԱ.— Ժընէվի սկաուտները երկու սինէ  
մայի (120 դիշէ) ներկայացումներ տուած են վերջին  
դեկտեմբերին, դասախօսութիւնով մը, ձէմպօրիի մաս-  
նակցող Զուիցերիական Սկաուտներու մասին: Ուր տեղի  
ունեցած են նաև, պիւֆէ, դաշնակ, զանազան հրա-  
պուրիչ տեսարաններ:  
ՊՅՑ-ՍԿԱՌԻՏՆԵՐԸ ԱՆԳՂԻՆՑ ՄԷՉ. -- 14 Յունիսին  
Երեսփ. Ժողովին ներկայացուեցաւ օրինագիծ մը, որով

Վերջին լրագրերու մէջ գրուածներուն համաձայն՝  
Տէմսէյ փորձի ատեն աչքին վրայ ստացած վերքի մը հե-  
տեանքով, կ'ստիպուի մարդական գործիքներով միայն  
գրադիլ, ան իր փորձերը այնչափ վայրագօրէն կը կատարէ

Պայակաւանները Անդրոյ մէջ աւելի մեծ հեղինակութիւն մը պիտի ունենան: Յիշեալ օրինակներն համեմատ, այդ ընկերակցութեան անդամները միայն Պայակաւան հոլովելու և համադրեալ ու նշաններ գործածելու օրինական իրաւունքը պիտի ունենան:

«ժ. Զայն»

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՊԱՏԻՖ ՄԸ. — Յայտնի է թէ հրդեհի ազդարար տուփեր կան եւրոպական և ամերիկեան քաղաքներու մէջ. երբ տեղ մը հրդեհ ծագի, անմիջապէս կը խորտակեն այդ տուփը, և հրդեհ խուսմբերը վայրկեւաբար կը փութան հրդեհին վայրը:

Ամերիկայի Մէտչուսէթ նահանգին մէկ քաղաքին մէջ 24 տարեկան քանի մը տղաք, հրդեհի ազդարար տուփերը կտրած ըլլալուն համար պատժուած են դատարանէն: Անոնց պատիժն է եղեր գրել հետեւեալ նահադատութիւնը 1000 անգամ.

«Հիմա կը հասկնամ որ կատակի համար հրդեհի ազդարարութիւն ընելը հակառակ է օրէնքին, որովհետեւ ամէն անգամ որ կրակ մարող կառքերը կուգան, քաղաքին վրայ մեծ ծախս կ'ըլլայ. Ասկէ զատ կառքերը այնքան արագ կուգան որ միշտ կառքերուն տակ մարդ կոխկուտուելու վտանգը գոյութիւն ունի»:

Այս նախադատութիւնը 1000 անգամ գրելէ վերջ միայն կրցած են տուն երթալ չարածնի տղաքը:


«Վ. Ուր»

Մասնաճիւղերուն, կուսակցութեանը շարքերուն մէջ չառնելու այն սկաւառ պատանիները՝ որոնք 18 տարեքը չեն լրացուցած:

Յուսարով որ համաձայն պիտի գտնուիք լմեր տեսակէտին:

Մնամք յարգանքով

Հ. Մ. Ը. Մ. ԿԵՂԵՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
Պատասխանատու Քարտուղար



### ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

921 Մայիս 13, Կ. Պոլիս

Պատուարժան Վարչութիւն

Հայ Մարմնակրթ. Ընդհ. Միութեան

Սկաւառական շարժումը լիաշատու մեքուս չենթարկելու համար մեզ ուղղուած նամակը գրելէ առաջ պատուարժան Վարչութիւնը լաւ կ'ընէր որ կուսակցութեանս Կողմակաւ Կանոնադրի առաջին յօդուածը կարդար, ուր որոշուած շեշտուած է այդ պարագան՝ թէ տանեալութեան տարիքը չլրացնող որ և է անհաս չի կրնար կուսակցութեանս անդամակցիլ:

Հետեւաբար Հնչակեան կուսակցութիւնը աւելի քան քաջայերոզն կրնաք նկատել և ոչ թէ որ և է ձեռով անոր զարգացման արդեւիք հանդիսացող:

Ի Դիմաց Ս. Դ. Հնչ. Հուսակցութեան Կ. Պոլսոյ

Երջանի Դորեաղի Մարմնոյ

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱԳԵՏ

Ստորագրութիւն

Ստորագրութիւն

(Կնիք)

Թիւ 217

18 Մայիս 1921

Հ. Մ. Ը. Մ. -ի

Կեդրոնական Վարչութեան

Ազնիւ Հայրենակիցներ,

Մայիս 12 թուակիր և 689 թուահամար 2եր գրութիւնը ստացուած է. 2եր շոշափած խնդրի մասին որ և է տարակարծութիւն չկայ մեր և ձեր միջեւ:

Մեր կուսակցութեան մէջ միշտ մտած են ու կրնան մտնել միմիայն չափահասներ: Հակառակ ընթացք մը վնասակար գտած ենք ու կը գտնենք թէ՛ անհասին և թէ՛ կուսակցութեան համար:

Այնուամենայնիւ 2եր առաջարկը կ'ընդունինք սիրայօժար և կը հրահանգենք մեր մարմինները. որպէս զի մասնաւոր ուշադրութիւն դարձնեն և ասկէ ետքն ալ 18 տարեկանէն վար սկաւառ պատանիները չառնեն մեր կուսակցութեան մէջ, եթէ մինչեւ իսկ ուրիշներու մօտ հակառակը տեսնեն:


Յաջողութիւն մաղթելով 2եզ՝ ձեր ազնիւ ձեռնարկին մէջ,

Յարգանքներով՝

Հ. Յ. Դ. Պոլսի Կեդր. Կօմիտէ

(Կնիք)

### ՍԿԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Հ Մ Ը Մ. Կեդրոնի վարչութիւնը իր 9 մայիս 1921 նիստին մէջ որոշած էր ղիմում կատարել թոյր կուսակցութիւններուն խնդրելու որ 18 տարեկանէն վար պատանիները յարձանագրեն կուսակցական շարժումն մէջ: Հանոյնով ստացանք թոյր կուսակցութեանց Պոլսոյ կեդրոններէն մեր խնդրանքին ընդառաջ գացող եւ մեր շարժումը ֆայտեող պատասխաններ: Մեր նամակը եւ կուսակցութեանց պատասխանները կը հրատարակենք ստորեւ:

Հ. Մ. Ը. Մ. Կեդրոնի Երկրորդ

չորս կուսակցութիւններու դրկաւած

12 Մայիս 1921

Սկաւառական շարժումը իր նախաքայլերուն մէջ խաչատու մեքուս չենթարկելու և հայ պատանիին մէջ սկաւառական ոգին զարգացնելու համար, Միութիւնս ջանք չի խնայեր:

Սոյն կէտը 2եր ուշադրութեան յանձնելով Հ. Մ. Ը. Մ. Կեդրոնի Վարչութիւնը յարմար կը տեսնէ խնդրել ձեռնէ որ՝ բարի ըլլաք հրահանգ տալ 2եր թաղային

Թիւ 182

Կ. Պոլիս, 24 Մայիս 19 1

Պատ Կեդր. Վարչութիւն  
Հայ Մարմնամարզական Ընդհ. Միութ.

Յարգելի Սկսուածներ,

Ստացանք Պատ. Կեդր. Վարչութեանդ 12 Մայիս 921 թուակիր և 621 թուահամար նամակը՝ որով փափագ կը յայտնուէր սկսուածական շարժումը իր նախագայիքուն մէջ պառակտումի չենթարկելու համար կուսակցութեանս շարքերուն մէջ չընդունիլ այն սկսուածները որոնք 18 տարիքը չեն լրացուցած:

Ներկայիս կը փութանք յայտնել Ձեզ թէ կուսակցութեանս կազմական կանոնագրի որոշ արտահարութեան հիմնովին հակառակ է արդէն 18 տարիքը չլրացուցած ու է պատանի ընդունիլ մեր շարքերուն մէջ:

Այս մասին աւելորդ չենք համարիր աւելցնել թէ կուսակցութիւնս խիստ համակրական վերաբերում մը ունի դէպի Հայ Սկսուածը եւ կը հաւատայ որ անոր կատարելագործումը ամենամեծ ազդակներէն մին պիտի ըլլայ ազգային ազատագրութեան դատին:

Յարգանքներով

Ազատական կուսակցութեան  
Պօլսոյ Նհնգ. Վարչութեան  
ԱՏԵՆԱԴՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ  
Ստորագրուիլն Ստորագրուիլն  
(Կնի/)

Թիւ 341

Կ. Պոլիս, 29 Մայիս 1921

Հայ Մարմնակրթ. Ընդհ. Միութեան  
Կեդրոնական Վարչութեան

Կ. Պոլիս

Ի պատասխան Ձեր թիւ 687 գրութեան՝ Հայ Ռամկավար կուսակցութեան Կ. Պոլսոյ Երջանային Վարչութիւնը պատիւ ունի յայտնելու թէ՛ արդէն մեր կուսակցութեան հիմնական կանոնագիրը 19էն վար տարիք ունեցողներու մուտքը կ'արգիլէ կուսակց. շարքերու մէջ:

Մենք որպէս Գործադիր Մարմին այդ սկզբունքին երբէք չենք թոյլատրած և չենք թոյլատրելու որ մեր սկսուածները կուսակցութեանս կանոնագրին հակառակ գործեն եւ շատ ուրախ ենք որ դուք ևս նախանձխնդիր հայ սկսուած պատանիներու մարմնակրթական և բարձրական զարգացման՝ այդ ուղղութեամբ կ'աշխատիք:

Յարգանք

Հայ Ռամկ. կուսակց. Կ. Պոլսոյ  
Երջ. Վարչութեան  
ԱՏԵՆԱԴՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ  
Ստորագրուիլն Ստորագրուիլն  
(Կնի/)

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ.—Կիրակի, 29 Մայիս, Իւնիոն Ֆրանսէզի մէջ տեղի ունեցաւ Հ. Մ. Ը. Մ. Վերջ Գարոց մասնաճիւղի տաշիկան սկսուածական հանդէսը, կարճ բայց շատ սիրուն յայտագրով մը: Դաշնակի ընկերակցութեամբ ի՛ր Մի/ մարզանքը շատ յաջող անցաւ: Սկսուածներու կողմէ կատարուեցան վերաւորեալներու փոխադրութեան, պատգարակներու շինութեան, վերջերու դարմանումի և այլ օգտակար փորձեր. Հանդէսին մասնակցեցան նաև Օր. Քրիսեան և Օր. Գալբաքեան, որոնք Երէնէն յաջող կտորներ զարկին դուռնակի վրայ, Սկսուածական կեանքէ փոքրիկ ներկայացումը և հանդէսին վերջուարութեան կատարուած բուրգերու կազմութիւնը խիստ դնտնատեղի յաջողութիւններ եղան:

Ներխայ էին վարժարանին տնօրէնութիւնը և ուսուցչական կազմը, ինչպէս նաև կեդրոնի ներկայացուցիչն ու ծնողքներ և համակիրներ, որոնք շնորհաբերով մարզիչ Պրն. Արարատ Քրիսեանի յաջողութիւնները, ինչպէս նաև տնօրէն Պրն. Յ. Հինգլանը, մեկնեցան խիստ գոհ տպաւորութեան ներքեւ:

Մաքր գիւղ Պէզազեան վարժարանի մէջ ուսանողութեան կողմէ ասկէ աւաջ հաւաքուած գումարը Լ. Օսմ. Թղթադրամ 113, հարիւր տասներեք) օսկի, յանձնուած է տեղւոյն Հ. Մ. Ը. Մ. ի Վարչութեան և նուիրատուներուն փափաքին համաձայն յատկացուած է այն վարժարանին մէջ դռնուող խնամատարական սաներուն սկսուածական գոյքերուն գնման:

Հ. Մ. Ը. Մ. Կեդրոնի Վարչութիւնը եւ Խմբագրութիւնս իր ցաւակցութիւնը կը յայտնէ իր անդամներէն Պ. Կարօ Պ յանեանի, իր քրոջ Օր. Հայկունիի ցաւալի կորուստին առթիւ:

Յաւով կը ծանուցանենք թէ «Ճակատամարտ»-ի խմբագիր Պ. Գուրգէն Միսիբարեան դժբախտութիւնն ունեցած է կորսնցնելու իր կինը. Տիկինն Երզնիկի ծաղիկ հասակի մէջ:

Խմբագրութիւնս իր ցաւակցութիւնը կը յայտնէ Պ. Միսիբարեանի եւ պարզաանեուն:

**ՍՏԱՆՍՆԻԿ**

Հանրածանօթ գրագէտ ամօլին Հ և Ձ. Ա. սատուրի հեղինակութիւններէն ԹԱՆԳԱՄԱՆ ընթերցանութեան դասագիրքի նոր ապագրութիւնը: Հրատարակութիւն Ա. Եազրճեան Գ, ատան, գին 50 դրուշ:

«Պատրաստ» խմբատիպ սկսուածական թերթը, օրկան Իզմիրի հայ Պօյ-սկսուածներու, գին 5 դրշ. ձեռքէ: Հասցէ՝ Բլթէր Գուլումճեան, Պազրճեան Եղբարց Վաճառատուն, Իզմիր:

«Միամեայ Տեղեկագիր» Ազգ. Կեդր. Ոլբաւոցի, Իզմիր, 1920 տարուոյ: